



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ընկերության անվանում՝	«Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (կրճատ՝ «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ)
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, 0004, Ծովակալ Իսակովի պ. 50/12
Հեռախոս՝	+ (374 10) 74-21-30
Էլ. փոստ՝	armatom@armatom.am
Ինտերնետային կայք՝	www.armatom.am

2022 թ.

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Կարևորում ենք Ընկերության երկարաժամկետ կայուն զարգացումը, բաժնետերերի և այլ շահառուների շահերի պաշտպանվածությունը, Ընկերության նկատմամբ նրանց վստահության ամրապնդումը, ինչպես նաև Ընկերության գործունեության թափանցիկության ապահովումը: «ՀԱՅԱՏՈՍ» ԳՀԻ ՓԲԸ շարունակաբար հետևելու է ՀՀ Կառավարության 23.06.2011թ. N881-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքի դրույթներին:

2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն Ընկերության կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

- ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով (ԲԸԺ),*
- բ) Ընկերության Խորհուրդ (ԸԽ),*
- գ) Ընկերության միանձնյա գործադիր մարմին՝ գլխավոր տնօրեն:*

Ընկերության բաժնետերն է.

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՀՀ ՏԿԵՆ) տիրապետում է ընկերության բաժնետոմսերի **100%**-ին:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

3.1. Հաշվետու տարում Ընկերությունը գումարել է **մեկ** Ընդհանուր ժողով և **երկու** արտահերթ Ընդհանուր ժողով:

3.2. Ընկերության Խորհրդի նիստերը գումարվել են՝

2021թ. հունվարի 26-ին

2021թ. մարտի 19-ին

2021թ. մայիսի 26-ին

2021թ. հոկտեմբերի 05-ին

2021թ. նոյեմբերի 11-ին

2021թ. նոյեմբերի 23-ին

3.3. Ընկերության արտահերթ Ընդհանուր ժողովները գումարվել են՝

2021թ. մարտի 23-ին

2021թ. հոկտեմբերի 08-ին

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում, ՀՀ, Երևան, 0010, Կառավարության տուն 3 հասցեում:

3.3. Տարեկան Ընդհանուր ժողովը գումարվել է **2021թ. հունիսի 28-ին** ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում, ՀՀ, Երևան, 0010, Կառավարության տուն 3 հասցեում:

4. ԽՈՐՀՆՈՒՐԴԸ

Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիր

4.1. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կանոնագրքի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության 13.4.1 կետը սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները, որոնք են՝

- ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
- բ) Տարեկան և արտահերթ Ժողովների գումարումը, բացառությամբ կանոնադրության 11.7.5 կետով նախատեսված դեպքերի,
- գ) Ժողովի օրակարգի հաստատումը,
- դ) Ժողովների տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը,
- ե) Կանոնադրության 11.2.1 կետի «բ», «ժգ», «ժե», «ժզ», «ժէ», «ժը» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը,
- զ) Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
- է) Գույքի շուկայական արժեքի որոշումը Օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով,
- ը) Օրենքով նախատեսված դեպքերում ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,
- թ) Ընկերության գլխավոր տնօրենի, խորհրդի անդամների, վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,
- ժ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը՝
 - ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
 - ժբ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
 - ժգ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
 - ժդ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
 - ժե) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը,
 - ժզ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,
 - ժէ) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
 - ժը) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
 - ժթ) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում,
- ի) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը՝
 - իա) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
 - իբ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը,
 - իգ) Օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը,
 - իդ) Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

4.2. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Ընկերության խորհուրդը բաղկացած է **3** անդամից, որոնցից **1**-ը գործադիր է, **2**-ը՝ ոչ գործադիր:

Ընկերության խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սահմանված չէ:

Պաշտոնը և անունը	Գործադիր	Ոչ գործադիր	Անկախ	Խորհրդում զբաղեցրած պաշտոնը սկսած
*Խորհրդի նախագահ				
ՀՀ ՏԿԵՆ իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետ Աստղիկ Թումանյան		✓		19.12.2019թ. - 08.10.2021թ.
Խորհրդի նախագահ				
ՀՀ ՏԿԵՆ իրավաբանական վարչության պետ Արամ Խաչատրյան		✓		08.10.2021թ.
Խորհրդի անդամ				
ՀՀ ՏԿԵՆ ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ Արմեն Մանուկյան		✓		19.12.2019թ.
«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Վահրամ Պետրոսյան	✓			2006թ.

***Խորհրդի նախագահ՝**

ԱՍՏՂԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

05.02.1992 թ.

Կրթություն՝

բարձրագույն

Աշխատանքային փորձ՝

ՀՀ ՏԿԵՆ իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետ

Հիմնական որակավորում՝

Իրավաբան

Անձնական պարտականություններ և խնդիրներ՝

- **Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,**
- **Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է,**
- **Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը և այլն:**

(Ընկերության կանոնադրության 13.6.2 կետ)

Խորհրդի նախագահ՝

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

Կրթություն՝

Աշխատանքային փորձ՝

Հիմնական որակավորում՝

Անձնական
պարտականություններ և
խնդիրներ՝

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

12.06.1992թ.

Բարձրագույն, իրավաբանական գիտությունների
թեկնածու

ՀՀ ՏԿԵՆ իրավաբանական վարչության պետ

Իրավաբան

- *Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,*
- *Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է,*
- *Կազմակերպում է նիստերի արձանագրության
վարումը և այլն:*

(Ընկերության կանոնադրության 13.6.2 կետ)

Խորհրդի անդամ՝

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

Կրթություն՝

Աշխատանքային փորձ՝

Հիմնական որակավորում՝

Անձնական
պարտականություններ և
խնդիրներ՝

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

21.06.1971 թ.

Բարձրագույն, տնտ. գիտ. թեկ.

ՀՀ ՏԿԵՆ վարկային և դրամաշնորհային ծրագրերի
վարչության պետ

Տնտեսագետ

- *մասնակցում է Խորհրդի աշխատանքներին*

Խորհրդի անդամ՝

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

Կրթություն՝

Աշխատանքային փորձ՝

Հիմնական որակավորում՝

Ընկերությունում աշխատած
տարիներ՝

Անդամություն Ընկերության կամ
այլ Ընկերությունների Խորհրդի
հանձնաժողովներին՝

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

18.03.1954 թ.

Բարձրագույն, տեխ. գիտ. դոկ., պրոֆեսոր
Միջազգային ճարտարագիտական Ակադեմիայի
իսկական անդամ

Հայաստանի ճարտարագիտական Ակադեմիայի
իսկական անդամ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

ճարտարագետ-ջերմաէներգետիկ

1977թ. առ այսօր

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ Խորհրդի անդամ

ՀՀ Վարչապետին կից Ատոմային Էներգետիկայի
Անվտանգության Խորհրդի (ԱԷԱԽ) անդամ,
գործադիր քարտուղար

«ՀԱԷԿ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

«Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական
Համալսարան» (ՀԱՊՀ) գիտխորհրդի անդամ
ՀԱՊՀ ԲԱՆԲԵՐ հանդեսի խմբագրական խորհրդի
անդամ

Հայաստանի Ճարտարագիտական Ակադեմիայի
ԼՐԱԲԵՐ (ՀՃԱԼ) խմբագրական խորհրդի անդամ

- Մասնակցում է Խորհրդի աշխատանքներին

Անձնական
պարտականություններ և
խնդիրներ՝

4.3. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարվա ընթացքում խորհուրդը գումարել է 6 նիստ: Նիստերը անցկացվել են Խորհրդի անդամների համատեղ ներկայությամբ:

Պաշտոն և անուն	Նիստերին մասնակցությունը անձամբ	Նիստերին մասնակցությունը հեռակա կարգով	Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր
* Նախագահ՝ Աստղիկ Թումանյան	4	-	4
Նախագահ՝ Արամ Խաչատրյան	2	-	2
Անդամ՝ Արմեն Մանուկյան	6	-	6
Անդամ՝ Վահրամ Պետրոսյան	6	-	6

* Խորհրդի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը (08.10.2021թ.)՝ իր դիմումի համաձայն:

4.4. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Խորհուրդը չունի ընդունված գնահատման քաղաքականություն, քանի որ նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է միանձնյա գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը:

Գլխավոր տնօրեն՝

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

Կրթություն՝

Աշխատանքային փորձ՝

Հիմնական որակավորում՝

Ընկերությունում աշխատած տարիներ՝

Վահրամ Պետրոսյան

18.03.1954 թ.

Բարձրագույն, տեխ. գիտ. դոկ., պրոֆեսոր

Միջազգային Ճարտարագիտական Ակադեմիայի
իսկական անդամ

Հայաստանի Ճարտարագիտական Ակադեմիայի
իսկական անդամ

«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

ճարտարագետ-ջերմաէներգետիկ

1977թ. առ այսօր

Անդամություն Ընկերության կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողովներին՝

Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիր

«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ Խորհրդի անդամ,
ՀՀ Վարչապետին կից Ատոմային Էներգետիկայի Անվտանգության Խորհրդի (ԱԷԱԽ) անդամ,
գործադիր քարտուղար
«ՀԱԷԿ» ՓԲԸ խորհրդի նախագահ
ՀԱՊՀ գիտխորհրդի անդամ
ՀԱՊՀ ԲԱՆԲԵՆ հանդեսի խմբագրական խորհրդի անդամ
ՀՃԱԼ խմբագրական խորհրդի անդամ

Անձնական պարտականություններ և խնդիրներ՝

- Տնօրինում է Ընկերության գույքը, ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,
- Ներկայացնում է Ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում,
- Կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային հաշիվներ,
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,
- Արձակում է հրամաններ և վերահսկում դրանց կատարումը,
- Օրենքով սահմանված կարգով աշխատանքի է ընդունում/ազատում ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատակիցներին:

(Ընկերության Կանոնադրության Գլուխ 14, Հոդված 14.3)

6. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան հաշվետվությունը ներկայացվել է 26.05.2021թ. և հաստատվել է Բաժնետիրոջ Տարեկան Ընդհանուր Ժողովում (Բաժնետիրոջ որոշման)՝ 28.06.2021թ.:

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնադրքի 23-րդ հոդվածով սահմանված ողջ տեղեկությունները և տեղադրված է Ընկերության կայքում՝ www.armatom.am:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրություն)

ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ



ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆՆ

(ստորագրություն)

ՎԱՀՐԱՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ